



## 1985 Թ. ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՏԻԱՆ

<b>Համարը</b>	<b>Տեսակը</b>	Հիմնական
<b>Տիպը</b>	<b>Կարգավիճակը</b>	Գործում է
<b>Սկզբնաղբյուրը</b>	<b>Ընդունման վայրը</b>	Վիեննա
<b>Ընդունող մարմինը</b>	<b>Ընդունման ամսաթիվը</b>	22.03.185
<b>Ստորագրող մարմինը</b>	<b>Ստորագրման ամսաթիվը</b>	22.03.1985
<b>Վավերացնող մարմինը</b>	<b>Վավերացման ամսաթիվը</b>	
<b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b>	<b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>	
30.12.1999		

### ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՏԻԱ ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

### ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### Նախաբան

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

- գիտակցելով օզոնային շերտի վիճակի փոփոխությունների պոտենցիալ կործանարար ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,
- վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու շրջակա միջավայրի վերաբերյալ վեհաժողովի Հռչակագրի համապատասխան դրույթները, և մասնավորապես 21-րդ սկզբունքը, որը նախատեսում է, որ «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն պետություններն ինքնիշխան իրավունք ունեն մշակելու իրենց սեփական ռեսուրսները շրջակա միջավայրի բնագավառում իրենց վարած քաղաքականությանը համապատասխան և պատասխանատվություն են կրում այն բանի ապահովման համար, որպեսզի իրենց իրավասության կամ վերահսկողության շրջանակներում տարվող գործունեությունը ազգային իրավասության սահմաններից դուրս վնաս չհասցնի այլ պետությունների կամ շրջանների շրջակա միջավայրին»,
- նկատի ունենալով զարգացող երկրների հատուկ պահանջները և հանգամանքները,
- հաշվի առնելով ինչպես միջազգային, այնպես էլ ազգային կազմակերպություններում տարվող աշխատանքը և հետազոտությունները, և, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի օզոնային շերտի վերաբերյալ գործողությունների համաշխարհային պլանը,
- հաշվի առնելով նաև օզոնային շերտի պահպանության ազգային և միջազգային մակարդակներով արդեն ընդունված նախազգուշական միջոցառումները,
- գիտակցելով, որ մարդու գործունեության արդյունքում առաջացած փոփոխություններից օզոնային շերտի պահպանության միջոցառումները պահանջում են միջազգային համագործակցություն և գործողություններ միջազգային մակարդակով և պետք է հիմնվեն համապատասխան գիտատեխնիկական դատողությունների վրա,
- գիտակցելով նաև օզոնային շերտի և նրա վիճակի փոփոխության հնարավոր բացասական հետևանքների մասին լրացուցիչ գիտական տեղեկություններ ստանալու համար հետագա

- հետազոտությունների և պարբերաբար դիտումների անցկացման անհրաժեշտությունը,
- վճռականությամբ լի պաշտպանելու մարդու առողջությունը և շրջակա միջավայրը օգոնային շերտի վիճակի փոփոխության անբարենպաստ ազդեցությունից,
- պայմանավորվեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

### Սահմանումներ

Սույն Կոնվենցիայում՝

1. «Օգոնային շերտ» նշանակում է մոլորակի սահմանամերձ շերտից վերև գտնվող մթնոլորտային օդոնի շերտը:
2. «Անբարենպաստ ազդեցություն» նշանակում է փոփոխություններ ֆիզիկական միջավայրում, կամ բիոտայում՝ ներառյալ կլիմայի փոփոխությունները, որոնք ունեն զգալի վնասակար հետևանքներ մարդու առողջության համար, կամ բնական և կանոնավորվող էկոհամակարգերի կամ մարդու կողմից օգտագործվող նյութերի բաղադրության, վերականգնողական հատկությունների կամ արդյունավետության համար:
3. «Այլընտրանքային տեխնոլոգիաներ կամ սարքավորումներ» նշանակում են այն տեխնոլոգիաները կամ սարքավորումները, որոնց կիրառումը թույլ է տալիս նվազեցնել կամ լրիվ վերացնել նյութերի արտանետումները, որոնք ցուցաբերում են կամ ունակ են ցուցաբերելու անբարենպաստ ազդեցություն օգոնային շերտի վրա:
4. «Այլընտրանքային նյութեր» նշանակում են նյութեր, որոնք նվազեցնում, վերացնում կամ կանխում են օգոնային շերտի վրա անբարենպաստ ազդեցությունը:
5. «Կողմերը» մեծատառով գրված, եթե տեքստում մեկ այլ բան չի նշված, նշանակում են սույն Կոնվենցիայի Կողմեր:
6. «Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն» նշանակում է կազմակերպություն՝ կազմված տվյալ տարածաշրջանի ինքնիշխան պետություններից, որն իրավասու է սույն Կոնվենցիայի և նրա Արձանագրություններով կարգավորվող հարցերում և պատշաճ ձևով լիազորված է, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, ստորագրել, վավերացնել, ընդունել, հավանության արժանացնել համապատասխան փաստաթղթերը կամ միանալ դրանց:
7. «Արձանագրություններ» նշանակում են սույն Կոնվենցիային կից արձանագրությունները:

## Հոդված 2

### Ընդհանուր պարտավորություններ

1. Կողմերը, սույն Կոնվենցիային և այն գործող արձանագրությունների դրույթներին համապատասխան, որոնց մասնակից են հանդիսանում նրանք, ձեռնարկում են պատշաճ միջոցներ, որպեսզի պաշտպանեն մարդու առողջությունը և շրջակա միջավայրը անբարենպաստ հետևանքներից, որոնք օգոնային շերտի վիճակը փոփոխող կամ փոփոխելու ունակ մարդկային գործունեության արդյունք են:
2. Այդ նպատակով Կողմերը, իրենց տրամադրության տակ ունեցած միջոցներին և իրենց հնարավորություններին համապատասխան.
  - ա) համագործակցում են պարբերաբար դիտարկումների, հետազոտությունների և տեղեկատվության փոխանակման միջոցով, որպեսզի ավելի խորը ճանաչեն և գնահատեն մարդու գործունեության ազդեցությունը օգոնային շերտի վրա և օգոնային շերտի վիճակի փոփոխությունների հետևանքները մարդու առողջության և շրջակա միջավայրի համար,
  - բ) ձեռնարկում են պատշաճ օրենսդրական և վարչական միջոցառումներ և համագործակցում են համապատասխան ծրագրային միջոցառումների համաձայնեցման բնագավառում, որպեսզի վերահսկեն, սահմանափակեն, կրճատեն և կանխեն իրենց վերահսկման կամ իրավասության ենթակա մարդու

գործունեությունը, եթե հայտնաբերվի, որ այդ գործունեությունը թողնում է կամ կարող է թողնել անբարենպաստ ազդեցություն, փոխելով օգոնային շերտի վիճակը կամ ստեղծելով նրա փոփոխման հնարավորություն,

գ) սույն Կոնվենցիայի կատարման համար համագործակցում են համաձայնեցված միջոցառումների, գործընթացների և չափանիշների մշակմանը՝ արձանագրությունների և հավելվածների ընդունման նպատակով,

դ) համագործակցում են իրավասու միջազգային մարմինների հետ, որպեսզի արդյունավետ իրականացնեն սույն Կոնվենցիան և այն Արձանագրությունները, որոնց մասնակիցն են նրանք:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները ոչ մի ձևով չեն շոշափում Կողմերի ներպետական միջոցառումներ ձեռնարկելու իրավունքը, միջազգային իրավունքին համապատասխան, ի լրումն սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված միջոցառումների, նրանք չեն շոշափում նաև Կողմերի կողմից արդեն ընդունված լրացուցիչ ներպետական միջոցառումները, այն պայմանով, որ այդ միջոցառումները համատեղելի են սույն Կոնվենցիայի շրջանակներում նրանց պարտավորությունների հետ:

4. Սույն հոդվածը կիրառվում է համապատասխան գիտատեխնիկական դատողություններից ելնելով:

### Հոդված 3

## Հետազոտություններ և պարբերաբար դիտարկումներ

1. Կողմերը պարտավորվում են համապատասխան կարգով կազմակերպել հետազոտություններ ու գիտական գնահատումներ և համագործակցել դրանց անցկացման համար անմիջականորեն կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով, հետևյալ հարցերով՝

ա) ֆիզիկական և քիմիական գործընթացները, որոնք կարող են ազդել օզոնային շերտի վրա,

բ) մարդու առողջության վրա ազդեցությունը և այլ կենսաբանական հետևանքները, որոնք առաջացել են օզոնային շերտի վիճակի փոփոխությունից, հատկապես կենդանի օրգանիզմների վրա ազդող ուլտրամանուշակագույն արեգակնային ճառագայթման փոփոխություններից (ՈւՄ-Կ),

գ) օզոնային շերտի վիճակի փոփոխության ազդեցությունը կլիմայի վրա,

դ) օզոնային շերտի վիճակի ցանկացած փոփոխությունների և ՈւՄ-Կ ճառագայթման ինտենսիվության ցանկացած փոփոխության ազդեցությունը մարդու կողմից օգտագործվող բնական և արհեստական նյութերի վրա,

ե) նյութերը, աշխատանքի պրակտիկան, գործընթացները և գործունեության տեսակները, որոնք կարող են ազդել օզոնային շերտի և նրա կոմույատիվ ազդեցության վրա,

զ) այլընտրանքային նյութերը և տեխնոլոգիաները,

է) համապատասխան սոցիալ-տնտեսական հարցերը,

ինչպես նաև այլ հարցերով, որոնք մանրամասն քննարկվում են 1-ին և 2-րդ հավելվածներում:

2. Կողմերը պարտավորվում են անմիջականորեն կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով, լրիվ հաշվի առնելով ազգային օրենսդրությունը և գործունեության այնպիսի տեսակները, որոնք տարվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով, աջակցել կամ վարել օզոնային շերտի վիճակը և այլ համապատասխան չափանիշները հսկող պարբերաբար դիտարկումների համատեղ կամ միմյանց լրացնող ծրագրեր, ինչպես դա նախատեսվում է 1-ին հավելվածում:

3. Կողմերը պարտավորվում են անմիջականորեն կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով համագործակցել հետազոտական տվյալների հավաքման, ստուգման և միջազգային համապատասխան կենտրոնների միջոցով տվյալների կանոնավոր և ժամանակին փոխանցումը ապահովելու գործում:

## Համագործակցությունը իրավական և գիտատեխնիկական ոլորտներում

1. Կողմերը աջակցում են սույն Կոնվենցիային վերաբերող գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, առևտրական և իրավական տեղեկատվության փոխանակմանը 2-րդ հավելվածում պարունակվող առավել մանրամասն դրույթներին համապատասխան: Այդպիսի տեղեկությունը տրամադրվում է այն մարմիններին, որոնց մասին կայանաավորվեն Կողմերը: Տեղեկատվություն ստացող ցանկացած այդպիսի մարմին, որին տրամադրող Կողմը համարում է գաղտնի, երաշխավորում է չհրապարակել այդպիսի տեղեկատվությունը և ընդհանրացնում է այն այնպիսի ձևով, որպեսզի պահպանվի նրա գաղտնի բնույթը մինչ այն ժամանակ, երբ նա կտրամադրվի բոլոր Կողմերի տնօրինմանը:

2. Կողմերը համագործակցում են իրենց ազգային օրենքներին, նորմերին և պրակտիկային համապատասխան, հաշվի առնելով, մասնավորապես, զարգացող երկրների պահանջարկը՝ անմիջականորեն կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով նպաստել տեխնոլոգիաների ու գիտելիքների զարգացմանը և փոխանցմանը: Այդպիսի համագործակցությունը իրականացվում է, մասնավորապես, հետևյալ ուղիներով՝

- ա) այլ Կողմերի կողմից այլընտրանքային տեխնոլոգիաների ձեռքբերման դյուրացում,
- բ) նրանց այլընտրանքային տեխնոլոգիաների և սարքավորումների և համապատասխան հրահանգների կամ ձեռնարկների մասին տեղեկության տրամադրում,
- գ) հետազոտությունների և պարբերաբար դիտարկումների կատարման համար անհրաժեշտ սարքավորումների և սարքերի մատակարարում,
- դ) անհրաժեշտ գիտատեխնիկական կադրերի պատրաստում:

## Տեղեկության փոխանակում

Կողմերը քարտուղարության միջոցով, 6-րդ հոդվածի համաձայն հիմնված Կողմերի համաժողովին, փոխանցում են տեղեկատվություն սույն Կոնվենցիայի և այն արձանագրությունների իրականացման համար ձեռնարկված միջոցառումների մասին, որոնց մասնակիցն են նրանք հանդիսանում, այնպիսի ձևով և այնպիսի պարբերականությամբ, որոնք կսահմանվեն համապատասխան պայմանագրային փաստաթղթերով, Կողմերի խորհրդակցություններում:

## Կողմերի համաժողովը

1. Սույնով հիմնվում է Կողմերի համաժողովը: Կողմերի համաժողովի առաջին խորհրդակցությունը, 7-րդ հոդվածին համապատասխան, գումարվում է ժամանակավոր հիմունքներով քարտուղարության կողմից նշանակված ժամկետում, ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց: Հետագայում Կողմերի համաժողովի հերթական խորհրդակցությունները գումարվում են այն պարբերականությամբ, որը կսահմանի համաժողովը առաջին խորհրդակցությունում:

2. Կողմերի համաժողովի արտահերթ խորհրդակցությունները գումարվում են այն ժամանակ, երբ համաժողովը գտնի այն անհրաժեշտ, կամ Կողմերից մեկի գրավոր խնդրանքով, այն պայմանով, որ քարտուղարության կողմից Կողմերին ուղարկվելուց հետո վեց ամսվա ընթացքում այդ խնդրանքը արժանանա Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդի աջակցությանը:

3. Կողմերի համաժողովը միաձայնությամբ համաձայնեցնում և ընդունում է ինչպես իր, այնպես էլ իր կողմից հիմնված ցանկացած օժանդակ մարմինների ընթացակարգերը և ֆինանսական կանոնները, ինչպես նաև քարտուղարության գործունեությունը կարգավորող ֆինանսական դրույթները:

4. Կողմերի համաժողովը մշտապես հետևում է սույն Կոնվենցիայի կատարման ընթացքին և, բացի այդ՝

ա) սահմանում է 5-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող տեղեկության փոխանցման պարբերականությունն ու ձևը և քննարկում է այդ տեղեկությունը, ինչպես նաև ցանկացած օժանդակ մարմնի կողմից ներկայացված զեկույցները,

բ) ամփոփում է օգոնային շերտի վիճակի մասին, նրա հնարավոր փոփոխությունների և ցանկացած այդպիսի փոփոխությունների հնարավոր հետևանքների մասին գիտական տեղեկատվությունը,

գ) 2-րդ հոդվածին համապատասխան, աջակցում է օգոնային շերտի վիճակի փոփոխության պատճառ հանդիսացող և կամ փոփոխություն առաջացնող նյութերի արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով համապատասխան քաղաքականության, ռազմավարության և միջոցների համաձայնեցմանը, և պատրաստում է հանձնարարականներ սույն Կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ միջոցառումների վերաբերյալ,

դ) 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն ընդունում է հետազոտությունների, պարբերաբար դիտարկումների, գիտատեխնիկական համագործակցության, տեղեկության փոխանակման և տեխնոլոգիաների ու գիտելիքների փոխանցման ծրագրեր,

ե) անհրաժեշտության դեպքում քննարկում և ընդունում է ուղղումներ սույն Կոնվենցիային կամ նրա հավելվածներին, 9-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան,

զ) քննարկում է ցանկացած արձանագրության, ինչպես նաև նրա ցանկացած հավելվածների ուղղումները և, համապատասխան որոշման առկայության դեպքում, հանձնարարում է այդպիսի արձանագրության կողմերին ընդունել դրանք,

է) անհրաժեշտության դեպքում քննարկում է և ընդունում սույն Կոնվենցիային կից լրացուցիչ հավելվածներ, 10-րդ հոդվածին համապատասխան,

ը) անհրաժեշտության դեպքում քննարկում է և ընդունում արձանագրություններ, 8-րդ հոդվածին համապատասխան,

թ) հիմնում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի իրականացման համար,

ժ) ըստ անհրաժեշտության, օգտվում է իրավասու միջազգային մարմինների և գիտական հանձնաժողովների ծառայություններից, մասնավորապես, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև գիտական հետազոտությունների, պարբերաբար դիտարկումների և սույն Կոնվենցիայի նպատակների հետ կապված գործունեության այլ տեսակների ոլորտում օգոնային շերտի Համադրող հանձնաժողովի հետ և պատշաճ կերպով օգտագործում է այդպիսի մարմիններից և հանձնաժողովներից ստացած տեղեկատվությունը,

Ճ) քննարկում և ընդունում է ցանկացած լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են պահանջվել սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար:

5. Միավորված ազգերի կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև ցանկացած պետություն, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի Կողմ, կարող են ներկայացված լինել Կողմերի համաժողովի խորհրդակցություններում որպես դիտորդներ: Օգոնային շերտի պահպանությանը վերաբերող բնագավառներում, իրավասություն ունեցող ազգային կամ միջազգային, կառավարական կամ ոչ կառավարական ցանկացած մարմիններ կամ հաստատություններ, որոնք տեղեկացրել են քարտուղարությանը՝ Կողմերի համաժողովում որպես դիտորդ ներկայացված լինելու իրենց ցանկության մասին, կարող են թույլատրվել մասնակցել նրանում, եթե դրա դեմ չի առարկում Կողմերի խորհրդակցությանը ներկա գտնվողների ոչ պակաս, քան մեկ երրորդը: Դիտորդների թույլտվությունը և մասնակցությունը կարգավորվում է Կողմերի համաժողովի կողմից ընդունված ընթացակարգային կանոններով:

## Քարտուղարություն

1. Քարտուղարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) խորհրդակցությունների կազմակերպում և սպասարկում, ինչպես այդ նախատեսված է 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներում,

բ) 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն ստացված տեղեկատվության, ինչպես նաև 6-րդ հոդվածի հիման վրա ստեղծված օժանդակ մարմինների խորհրդակցություններից ստացված տեղեկատվության հիման վրա զեկույցների նախապատրաստումը և փոխանցումը,

գ) ցանկացած արձանագրություններով նրա վրա դրվող գործառույթների կատարումը,

դ) համաձայն սույն Կոնվենցիայի, իր գործառույթների կատարմանն ուղղված գործունեության մասին զեկույցների նախապատրաստումը և դրանց ներկայացումը Կողմերի համաժողովին,

ե) այլ համապատասխան միջազգային մարմինների հետ գործունեության անհրաժեշտ համակարգման ապահովումը և, մասնավորապես, այնպիսի վարչական և պայմանագրային համաձայնագրերի կնքումը, որոնք կարող են պահանջվել նրա գործառույթների արդյունավետ կատարման համար,

զ) այլ նման գործառույթների կատարումը, որոնք կարող են սահմանվել Կողմերի համաժողովի կողմից:

2. Քարտուղարության գործառույթները ժամանակավորապես կկատարվեն Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի կողմից, ընդհուպ մինչև Կողմերի, 6-րդ հոդվածի համաձայն իրավիրված, համաժողովի առաջին հերթական խորհրդակցության ավարտը: Իր առաջին հերթական խորհրդակցությունում Կողմերի համաժողովը հիմնում է քարտուղարություն՝ գոյություն ունեցող այն իրավասու միջազգային կազմակերպությունների թվից, որոնք պատրաստակամություն են հայտնել կատարելու քարտուղարության գործառույթները, սույն Կոնվենցիային համապատասխան:

## Հոդված 8

### Արձանագրությունների ընդունումը

1. Կողմերի համաժողովը, 2-րդ հոդվածին համապատասխան, խորհրդակցություններում կարող է ընդունել Արձանագրություններ:

2. Ցանկացած առաջարկվող Արձանագրության տեքստը փոխանցվում է Կողմերին քարտուղարության կողմից, այդպիսի խորհրդակցություն անցկացնելուց ոչ պակաս, քան 6 ամիս առաջ:

## Հոդված 9

### Կոնվենցիայի և Արձանագրությունների ուղղումներ

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկել ուղղումներ սույն Կոնվենցիային կամ ցանկացած Արձանագրությանը: Այդպիսի ուղղումներում պատշաճ կերպով հաշվի են առնվում, մասնավորապես, համապատասխան գիտատեխնիկական նկատառումները:

2. Սույն Կոնվենցիայի ուղղումներն ընդունվում են Կողմերի համաժողովի խորհրդակցությունում: Ցանկացած Արձանագրության ուղղումներն ընդունվում են համապատասխան Արձանագրության Կողմերի խորհրդակցությունում: Սույն Կոնվենցիային կամ ցանկացած Արձանագրությանը առաջարկված ցանկացած ուղղման տեքստը, եթե այդ Արձանագրությունում այլ բան չի նախատեսված, քարտուղարության կողմից հայտնվում է Կողմերին ոչ ուշ, քան վեց ամիս առաջ այն խորհրդակցության անցկացումից, որտեղ առաջարկվում է այն ընդունել: Քարտուղարությունը առաջարկված ուղղումների տեքստը հայտնում է նաև Կոնվենցիան ստորագրած երկրներին՝ ի գիտություն:

3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը՝ սույն Կոնվենցիային առաջարկված ցանկացած ուղղում-

ների նկատմամբ միաձայնության ճանապարհով համաձայնության հասնելու համար: Եթե սպառված են բոլոր միջոցները միաձայնության հասնելու համար, իսկ համաձայնության դեռ չեն հասել, ապա որպես վերջին միջոց, ուղղումն ընդունվում է խորհրդակցությանը ներկա և քվեարկությանը մասնակցող Կոնվենցիայի Կողմերի ձայների երեք քառորդով, և ավանդապահի կողմից ներկայացվում է բոլոր Կողմերին վավերացման, հաստատման կամ միանալու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում հիշատակված գործընթացը կիրառվում է ցանկացած արձանագրության ուղղումների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ընդունման համար բավական է խորհրդակցությանը ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երկու երրորդի մեծամասնությունը:

5. Ավանդապահին ուղարկվում են գրավոր ծանուցումներ ուղղումները վավերացնելու, հավանություն տալու կամ ընդունելու մասին: Սույն հոդվածի 3-րդ կամ 4-րդ կետերին համապատասխան ընդունված ուղղումները այն ընդունված Կողմերի համար ուժի մեջ են մտնում սույն Կոնվենցիայի Կողմերի ձայների առնվազն երեք քառորդով դրանք վավերացնելու, հավանություն տալու կամ ընդունելու մասին ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելուց հետո իննսուներորդ օրը, եթե միայն այդ Արձանագրությամբ այլ բան չի նախատեսված: Հետագայում ցանկացած այլ Կողմերի համար ուղղումները ուժի մեջ են մտնում տվյալ Կողմի կողմից այդ ուղղումները վավերացնելու, հավանություն տալու կամ ընդունելու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո իննսուներորդ օրը:

6. Սույն հոդվածի նպատակների համար «ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմեր» տերմինի ներքո նկատի են առնվում այն Կողմերը, որոնք ներկա են և քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

## Հոդված 10

### Հավելվածների ընդունում և դրանց մեջ ուղղումների կատարում

1. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած Արձանագրության հավելվածները կազմում են համապատասխանորեն սույն Կոնվենցիայի կամ այդ Արձանագրության անբաժանելի մասը, և եթե ուղղակի որևէ այլ բան չի նախատեսվում, ապա սույն Կոնվենցիայի կամ նրա Արձանագրությունների վկայակոչումը վերաբերում է նաև նրանց ցանկացած հավելվածին: Այդպիսի հավելվածները սահմանափակվում են գիտատեխնիկական և վարչական հարցերով:

2. Եթե որևէ Արձանագրությամբ նրա հավելվածների վերաբերյալ այլ դրույթներ չեն նախատեսվում, ապա սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածների կամ արձանագրության հավելվածների առաջադրման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար կիրառվում է հետևյալ գործընթացը.

ա) սույն Կոնվենցիայի հավելվածները առաջարկվում և ընդունվում են 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում սահմանված ընթացակարգին համապատասխան, իսկ ցանկացած արձանագրության հավելվածները առաջարկվում և ընդունվում են 9-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերում սահմանված ընթացակարգին համաձայն,

բ) ցանկացած Կողմ, որը հնարավոր չի համարում հավանություն տալ սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածներին կամ ցանկացած Արձանագրության հավելվածին, որի մասնակիցն է նա, գրավոր ծանուցում է այդ մասին ավանդապահին՝ ավանդապահի կողմից ընդունման մասին հաղորդագրության ուղարկման օրվանից հաշված վեց ամսվա ընթացքում: Ավանդապահն անհապաղ ծանուցում է բոլոր Կողմերին իր կողմից ստացված ցանկացած այդպիսի ծանուցման մասին: Կողմը կարող է ցանկացած ժամանակ առարկության մասին ավելի վաղ ուղարկված իր հայտարարությունը փոխարինել ընդունման մասին հայտարարությամբ, որից հետո հավելվածները մտնում են ուժի մեջ տվյալ Կողմի համար,

գ) ավանդապահի կողմից հաղորդման առաքման օրից վեց ամիս անց հավելվածը ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիայի կամ ցանկացած համապատասխան արձանագրությունների բոլոր այն Կողմերի համար, որոնք սույն հոդվածի (բ) ենթակետի դրույթներին համապատասխան չեն ներկայացրել ծանուցում:

3. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած Արձանագրության հավելվածներին ուղղումների առաջարկումը, ընդունումը և ուժի մեջ մտնելը կարգավորվում է այն ընթացակարգով, որը նման է Կոնվենցիայի կամ արձանագրությունների հավելվածների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար սահ-

մանված ընթացակարգին: Հավելվածներում և նրանց ուղղումներում պատշաճ կերպով հաշվի են առնվում, մասնավորապես, համապատասխան գիտատեխնիկական նկատառումները:

4. Եթե լրացուցիչ հավելվածը կամ հավելվածի ուղղումը կապված է սույն Կոնվենցիայի կամ Արձանագրության մեջ ուղղում մտցնելու հետ, ապա այդ լրացուցիչ հավելվածը կամ ուղղումներով հավելվածը ուժի մեջ է մտնում միայն սույն Կոնվենցիայի կամ համապատասխան Արձանագրության ուղղումը ուժի մեջ մտնելուց հետո:

## Հոդված 11

### Վեճերի կարգավորումը

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Կողմերի միջև առաջացած վեճերի դեպքում շահագրգիռ Կողմերը ձգտում են նրա կարգավորմանը բանակցությունների ճանապարհով:

2. Եթե շահագրգիռ Կողմերը չեն կարող հասնել համաձայնության բանակցությունների ճանապարհով, նրանք կարող են համատեղ ապավինել երրորդ կողմի բարի ծառայություններին կամ դիմել նրան՝ միջնորդության խնդրանքով:

3. Սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանության արժանացնելու կամ միանալու դեպքում, կամ դրանից հետո ցանկացած այլ ժամանակ, պետությունը կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը կարող են ավանդապահին ուղարկել գրավոր դիմում այն մասին, որ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին համապատասխան չլուծված վեճի համար, որպես կարգավորման պարտադիր միջոց նրանք ճանաչում են հետևյալ միջոցներից մեկը կամ երկուսը միասին.

ա) արբիտրաժը՝ Կողմերի համաժողովի կողմից նրա առաջին հերթական նիստով սահմանված ընթացակարգերին համապատասխան,

բ) վեճի հանձնումը Միջազգային դատարան:

4. Եթե Կողմերը սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան, չեն ընդունել միևնույն ընթացակարգը կամ ընթացակարգերից ցանկացածը, ապա վեճը կարգավորման է հանձնվում համաձայնեցման ընթացակարգի միջոցով՝ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան, եթե Կողմերը չեն պայմանավորվել այլ բանի մասին:

5. Վեճի կողմերից որևէ մեկի խնդրանքով ստեղծվում է համաձայնեցման հանձնաժողով: Հանձնաժողովը կազմվում է յուրաքանչյուր շահագրգիռ կողմից նշանակված հավասար թվով անդամներից և յուրաքանչյուր կողմից նշանակված անդամների կողմից համատեղ ընտրված նախագահից: Հանձնաժողովը կայացնում է հանձնարարական բնույթ ունեցող վերջնական որոշում, որը կողմերը բարեխղճորեն հաշվի են առնում:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած արձանագրության նկատմամբ, եթե այդ Արձանագրության մեջ այլ բան չի նախատեսված:

## Հոդված 12

### Ստորագրում

Սույն Կոնվենցիան բաց է պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների ստորագրման համար 1985 թվականի մարտի 22-ից մինչև 1985 թվականի սեպտեմբերի 21-ը Վիեննայում՝ Ավստրիայի Հանրապետության արտաքին գործերի դաշնային նախարարությունում և 1985 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 1986 թվի մարտի 21-ը Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում:



**Վավերացում, ընդունում կամ հավանություն**

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած Արձանագրություն ենթակա են վավերացման, ընդունման կամ հավանության պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Վավերացման, ընդունման կամ հավանության վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ի պահ ավանդապահին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած կազմակերպություն, որը դառնում է Կոնվենցիայի կամ ցանկացած Արձանագրության Կողմ, ընդ որում, եթե նրա անդամ պետություններից ոչ մեկը այդպիսի Կողմ չի հանդիսանում, կստանձնի Կոնվենցիայից կամ Արձանագրությունից համապատասխանաբար բխող բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպության մեկ կամ ավելի անդամ պետությունները դառնում են Կոնվենցիայի կամ համապատասխան Արձանագրության Կողմեր, այդ կազմակերպությունը և նրա անդամ պետությունները որոշում են ընդունում Կոնվենցիայից կամ Արձանագրությունից համապատասխանաբար բխող իրենց պարտականությունների կատարման մասին: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը և անդամ պետությունները չեն կարող զուգահեռ իրականացնել Կոնվենցիայից կամ համապատասխան Արձանագրությունից բխող իրավունքները:

3. Վավերացման, ընդունման կամ հավանության մասին իրենց փաստաթղթերում սույն հոդվածի 1-ին կետում նշված կազմակերպությունները, հայտարարում են Կոնվենցիայով կամ համապատասխան Արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրավասության սահմանների մասին: Այդ կազմակերպությունները ծանուցում են ավանդապահին նաև իրենց իրավասության սահմանների ցանկացած էական փոփոխությունների մասին:

**Միացում**

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած Արձանագրություն բաց են պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից միանալու համար՝ Կոնվենցիայի կամ համապատասխան Արձանագրության ստորագրումը դադարեցնելու ամսաթվից: Միանալու մասին փաստաթղթերը ի պահ են հանձնվում ավանդապահին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված կազմակերպությունները միանալու մասին իրենց փաստաթղթերում հայտարարում են Կոնվենցիայով կամ համապատասխան Արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրավասության սահմանների մասին: Այդ կազմակերպությունները ծանուցում են ավանդապահին նաև իրենց իրավասության սահմանների ցանկացած էական փոփոխությունների մասին:

3. 13-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները կիրառվում են տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների նկատմամբ, որոնք միանում են սույն Կոնվենցիային կամ ցանկացած արձանագրությանը:

**Ձայնի իրավունք**

1. Կոնվենցիայի կամ ցանկացած Արձանագրության յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դրույթի, տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության սահմաններում գտնվող հարցերով իրականացնում են իրենց ձայնի իրավունքը, տնօրինելով ձայների այնքան թիվ, որը հավասար է Կոնվենցիայի կամ համապատասխան Արձանագրության Կողմեր հանդիսացող նրանց անդամ պետությունների թվին: Նշված կազմակերպությունները կորցնում են իրենց ձայնի իրավունքը, եթե նրանց անդամ պետություններն իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և հակառակը:

**Կապը Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների միջև**

1. Պետությունը կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը կարող են դառնալ որևէ Արձանագրության Կողմ միայն այն դեպքում, եթե նրանք հանդիսանում կամ դառնում են միաժամանակ նաև Կոնվենցիայի Կողմեր:

2. Ցանկացած Արձանագրությանը վերաբերող որոշումներն ընդունվում են միայն համապատասխան Արձանագրության կողմերի կողմից:

**Ուժի մեջ մտնելը**

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու իննսուներորդ օրը:

2. Ցանկացած Արձանագրություն, եթե նրանում այլ բան չի նախատեսված, ուժի մեջ է մտնում տվյալ Արձանագրության վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին տասնմեկերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու իննսուներորդ օրը:

3. Յուրաքանչյուր Կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս սույն Կոնվենցիան կամ միանում է նրան վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրա կողմից Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնելուց հետո իննսուներորդ օրը:

4. Ցանկացած Արձանագրություն, եթե այդ Արձանագրության մեջ չի նախատեսված այլ բան, ուժի մեջ է մտնում այն Կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս այդ փաստաթղթին կամ միանում է նրան, համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի՝ նրա կողմից Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին իր փաստաթուղթը ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը կամ այն օրը, երբ Կոնվենցիան այդ Կողմի համար ուժի մեջ է մտնում, կախված նրանից, թե այդ օրերից որն է ավելի ուշ:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությանը ի պահ հանձնված ցանկացած փաստաթուղթ չի դիտվում որպես լրացում այդ կազմակերպությունների անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերին:

**Վերապահումներ**

Սույն Կոնվենցիայի նկատմամբ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

**Դուրս գալը**

1. Սույն Կոնվենցիան տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի հետո ցանկացած ժամանակ, Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից՝ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

2. Բացառությամբ որևէ Արձանագրության մեջ նախատեսված դեպքերի, տվյալ Կողմի համար այդ Արձանագրությունը ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի անց ցանկացած ժամանակ այդ Կողմը կա-

րող է դուրս գալ Արձանագրությունից՝ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

3. Ցանկացած այդպիսի դուրս գալը ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարի անց, կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշված լինել դուրս գալու մասին ծանուցման մեջ:

4. Սույն Կոնվենցիայից դուրս եկած ցանկացած Կողմ համարվում է նաև դուրս եկած ցանկացած Արձանագրությունից, որի Կողմ նա հանդիսանում է:

## Հոդված 20

### Ավանդապահ

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կատարում է սույն Կոնվենցիայի և ցանկացած Արձանագրությունների ավանդապահի գործառույթները:

2. Ավանդապահը տեղեկացնում է Կողմերին, մասնավորապես, հետևյալի մասին՝

ա) սույն Կոնվենցիայի և ցանկացած Արձանագրության ստորագրման մասին և, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան, վավերացման, ընդունման կամ հավանություն տալու, կամ միանալու մասին փաստաթղթերը ի պահ հանձնելու մասին,

բ) 17-րդ հոդվածին համապատասխան, Կոնվենցիայի և ցանկացած Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,

գ) 19-րդ հոդվածին համապատասխան արված դուրս գալու ծանուցումների մասին,

դ) 9-րդ հոդվածին համապատասխան Կոնվենցիային և ցանկացած Արձանագրության վերաբերյալ ընդունված ուղղումների, Կողմերի կողմից դրանց ընդունման և ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,

ե) 10-րդ հոդվածին համապատասխան, հավելվածների և դրանց ուղղումների ընդունման և հավանություն տալու մասին բոլոր հաղորդագրությունների մասին,

զ) տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների ծանուցումները սույն Կոնվենցիայով և ցանկացած Արձանագրություններով ու նրանց ուղղումներով կարգավորվող հարցերի ու նրանց իրավասության սահմանների մասին,

է) 11-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան արված հայտարարությունների մասին:

## Հոդված 21

### Տեքստերի նույնականությունը

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տարբերակները հավասարազոր են, հանձնվում է ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով, դրա համար լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վիեննա քաղաքում 1985 թվականի մարտի 22-ին:

## Հավելված 1

### Հետազոտություններ և պարբերաբար դիտարկումներ

1. Կոնվենցիայի Կողմերը ընդունում են, որ գլխավոր գիտական հիմնահարցերն են՝

ա) Օզոնային շերտի փոփոխությունը, որն արդյունքում կարող է առաջ բերել կենդանի օրգանիզմների վրա (ՈՒՄ-Կ) ազդող և երկրի մակերևույթին հասնող արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության փոփոխություն, և մարդու առողջության, օրգանիզմների, էկոհամակարգերի և մարդու կողմից օգտագործվող նյութերի վրա հնարավոր հետևանքները,

բ) օզոնի ուղղաձիգ պրոֆիլի փոփոխումը, որը կարող է խախտել մթնոլորտի ջերմաստիճանային

կառուցվածքը, և եղանակի և կլիմայի համար հնարավոր հետևանքները:

2. Կոնվենցիայի Կողմերը, 3-րդ հոդվածին համապատասխան, համագործակցում են հետազոտությունների և պարբերաբար դիտարկումների անցկացման բնագավառում և ձևակերպում հետագա հետազոտությունների և դիտարկումների մասին հանձնարարականներ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝

ա) Մթնոլորտի ֆիզիկայի և քիմիայի հետազոտությունները.

i) համալիր տեսական մոդելավորում. ճառագայթային, դինամիկ և քիմիական գործընթացների փոխազդեցությունը քննարկող մոդելների հետագա մշակում, մարդու կողմից ստեղծված և բնական զանազան նյութերի մթնոլորտային օզոնի վրա միաժամանակ գործած ազդեցության ուսումնասիրությունը, արբանյակներից և վերերկրյա սարքերից ստացված հեռաչափական չափումների տվյալների մեկնաբանությունը, մթնոլորտային և գեոֆիզիկական չափանիշների գնահատումը և այդ չափանիշների փոփոխությունների պատճառների որոշման մեթոդների մշակումը,

ii) տրոպոսֆերային և ստրատոսֆերային քիմիական և ֆիզիկական գործընթացների փոխազդեցության մեխանիզմների և կլանման հատումների, փոփոխությունների գործակիցների լաբորատոր չափումները, սպեկտրոսկոպիայի տվյալները լուսապատկերի բոլոր համապատասխան հատվածներում դաշտային չափումների ուժեղացման համար,

iii) դաշտային չափումներ. ինչպես բնական, այնպես էլ մարդածին ծագում ունեցող հիմնական ելակետային գազերի կոնցենտրացիայի և հոսքերի ուսումնասիրությունը, մթնոլորտային դինամիկայի հետազոտությունները, երկրի մթնոլորտի սահմանից վերև լուսաքիմիական տեսակետից ազգակից հետազոտման օբյեկտների միաժամանակ չափումները, in situ տվիչների և հեռացույց տվիչների օգտագործմամբ, տարբեր կետերում և տարբեր գործիքներով ստացված տվյալների համեմատությունը, ներառյալ արբանյակային սարքավորման համար չափումների անվանացուցակների համակարգումը և միասնականացումը, հիմնական հետքային մթնոլորտային խառնուրդների, արեգակնային ճառագայթման սպեկտրալ հոսքի և օդերևութաբանական չափանիշների եռաչափ պատկերների ստացումը,

iv) գործիքների մշակում, ներառյալ նաև հետքային մթնոլորտային խառնուրդների, արեգակնային ճառագայթման հոսքի և օդերևութաբանական չափանիշների չափման համար արբանյակային և ոչ արբանյակային տվիչները:

բ) Օզոնային շերտի փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությունը մարդու առողջության, կենսոլորտի և լուսաքայքայման պրոցեսների վրա՝

i) մարդու տեսանելի և ուլտրամանուշակագույն արեգակնային ճառագայթահարման կապը ա) մաշկի ինչպես ոչ մելանոմային, այնպես էլ մելանոմային քաղցկեղի զարգացմամբ և բ) իմունային համակարգի վրա գործած ազդեցությամբ,

ii) կախված ալիքների երկարությունից ՈՒՄ-Կ-ի ճառագայթման ներգործությունը ա) գյուղատնտեսական կուլտուրաների, անտառի և ցամաքի այլ էկոհամակարգերի վրա և բ) ջրային էկոհամակարգերի սննդային շղթայի և ձկնորսության վրա, նաև ծովային ֆիտոպլանկտոնի կողմից թթվածնի անջատման հնարավոր արգելակումը,

iii) ՈՒՄ-Կ ճառագայթման ներգործման մեխանիզմները կենսաբանական նյութերի, տեսակների և էկոհամակարգերի վրա, ներառյալ բաժնի, բաժնի հզորության և ռեակցիայի միջև եղած կապը, ֆոտոռեպարացիա, ադապտացիա և պաշտպանություն,

iv) ալիքի տարբեր երկարություն ունեցող գոտիների հնարավոր փոխազդեցության բացահայտում՝ ազդեցության կենսաբանական սպեկտրների և պոլիքրոմատիկ ճառագայթահարման սպեկտրալ ռեակցիայի ուսումնասիրման ճանապարհով,

v) ՈՒՖ-Կ ճառագայթման ներգործությունը կենսոլորտի հավասարակշռության գործում կարևոր դեր խաղացող, կենսաբանական տեսակների զգայունակության և ակտիվության և այնպիսի առաջնային բնական գործընթացների վրա, ինչպիսիք են ֆոտոսինթեզը և կենսասինթեզը,

vi) ՈՒՄ-Կ ճառագայթման ներգործումը աղտոտող նյութերի, գյուղատնտեսական քիմիկատների և այլ նյութերի ֆոտոքայքայման վրա:

գ) Կլիմայի վրա ներգործման ուսումնասիրությունը՝

i) օզոնի և այլ միկրոէլեմենտների ռադիացիոն էֆեկտի և կլիմայական չափանիշների, ինչպես օրինակ ցամաքի մակերևույթի և օվկիանոսի ջերմաստիճանի, տեղումների բնույթի, տրոպոսֆերայի և

ստրատոսֆերայի միջև փոխանակության վրա ազդեցության տեսական ուսումնասիրությունը և դիտարկումները,

ii) մարդկային գործունեության տարբեր ձևերի վրա կլիմայի այդպիսի փոփոխության ազդեցության ուսումնասիրությունը:

դ) Պարբերաբար դիտարկումներ՝

i) օզոնային շերտի վիճակի դիտարկումներ (օզոնի ընդհանուր բաղադրության և ուղղաձիգ պրոֆիլի տարածքային և ժամանակային փոփոխականությունը) վերջնական շարք մտցնել օզոնային շերտի դիտարկումների գլոբալ համակարգը, որը հիմնվում է դիտարկումների վերերկրյա և արբանյակային համակարգերի ինտեգրացիայի վրա,

ii) ելակետային գազերի կոնցենտրացիայի, նրանց մեջ HOx, NOx և ClOx, ինչպես նաև ածխածնային միացությունների պարունակության տրոպոսֆերայի և ստրատոսֆերայի դիտարկումներ,

iii) ջերմաստիճանի դիտարկումներ երկրի մակերևույթից մինչև մեզոսֆերա, օգտագործելով ինչպես վերերկրյա, այնպես էլ արբանյակային համակարգերը,

iv) երկրի մթնոլորտին հասնող արեգակնային ճառագայթման հոսքի ալիքային կազմի, և նրանից հեռացող ջերմային ճառագայթման դիտարկումները՝ օգտագործելով արբանյակներից ստացած տվյալները,

v) երկրի մակերևույթին հասնող և կենդանի օրգանիզմների վրա ազդող արեգակնային ճառագայթման ալիքային հոսքի կազմի դիտարկումներ սպեկտրի ուլտրամանուշակագույն հատվածում (ՈՒՄ-Կ),

vi) աերոզոլների հատկությունների և բաշխման դիտարկումներ երկրի մակերևույթից մինչև մեզոսֆերա ընկած շերտում, օգտագործելով դիտարկումների վերերկրյա, ինքնաթիռային և արբանյակային համակարգերը,

vii) կլիմայագիտության համար մեծ նշանակություն ունեցող փոփոխականների դիտարկումներ ցամաքի մակերևույթի բարձրորակ օդերևութաբանական չափումների իրականացման ծրագրերի հիման վրա,

viii) միկրոէլեմենտների, ջերմաստիճանի, արեգակնային ռադիացիայի հոսքի և աերոզոլների դիտարկումներ, օգտագործելով գլոբալ տվյալների վերլուծության ավելի կատարելագործված մեթոդներ:

3. Կոնվենցիայի Կողմերը համագործակցում են, խրախուսելով պատշաճ գիտատեխնիկական նախապատրաստումը, որն անհրաժեշտ է սույն հավելվածում նշված հետազոտություններում և պարբերաբար դիտարկումներում մասնակցելու համար, հաշվի առնելով զարգացող երկրների հատուկ պահանջները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սարքավորումների խաչաձև աստիճանանշմանը և դիտարկումների մեթոդների համաձայնեցմանը գիտական տվյալների համակարգված կամ համադրված շարքեր կազմելու համար:

4. Ընդունված է, որ կամայական կարգով թվարկված հետևյալ բնական կամ մարդածին ծագում ունեցող քիմիական նյութերը կարող են փոփոխել օզոնային շերտի քիմիական և ֆիզիկական հատկությունները:

ա) Ածխածնային նյութերը.

i) Ածխածնի օքսիդ (CO)

Ածխածնի օքսիդն ունի կարևոր բնական և մարդածին աղբյուրներ և, ինչպես ենթադրում են, խաղում է նշանակալից ուղղակի դեր տրոպոսֆերայի լուսաքիմիական գործընթացներում և անուղղակի դեր՝ ստրատոսֆերայի լուսաքիմիական գործընթացներում:

ii) Ածխածնի երկօքսիդ (CO<sub>2</sub>)

Ածխածնի երկօքսիդն ունի կարևոր բնական և մարդածին աղբյուրներ և ազդում է ստրատոսֆերայի օզոնի վրա մթնոլորտի ջերմային կառուցվածքի վրա ներգործելու միջոցով:

iii) Մեթան (CH<sub>4</sub>)

Մեթանն ունի ինչպես բնական, այնպես էլ մարդածին աղբյուրներ և ազդում է ինչպես տրոպոսֆերային, այնպես էլ ստրատոսֆերային օզոնի վրա:

iv) Ածխաջրածինների ոչ մեթանային տեսակներ

Ածխաջրածինների ոչ մեթանային տեսակները կազմված են մեծ թվով քիմիական նյութերից, ունեն ինչպես բնական, այնպես էլ մարդածին աղբյուրներ և խաղում են ուղղակի դեր՝ տրոպոսֆերայի լուսաքիմիական գործընթացներում և անուղղակի դեր՝ ստրատոսֆերայի լուսաքիմիական

գործընթացներում:

բ) Ազոտ պարունակող նյութերը.

i) Ազոտի ենթօքսիդ ( $N_2O$ )

$N_2O$ -ի աղբյուրների գերակշռող մասը իրենց բնույթով բնական են, սակայն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում նրանց մարդածին ազդեցությունը: Ազոտի ենթօքսիդը ստրատոսֆերային  $NO_x$  -ի հիմնական աղբյուրն է, որոնք վճռական դեր են խաղում ստրատոսֆերային օզոնի քանակության կարգավորման մեջ,

ii) ազոտի օքսիդներ ( $NO_x$ )

$NO_x$ -ի վերերկրյա աղբյուրները կարևոր ուղղակի դեր են խաղում միայն տրոպոսֆերայի լուսաքիմիական գործընթացներում, իսկ անուղղակի դեր՝ ստրատոսֆերայի լուսաքիմիայում, ընդ որում,  $NO_x$  -ի ներանցումը տրոպոպաուզայի մոտակայքում կարող է անմիջականորեն առաջ բերել օզոնի փոփոխություն տրոպոսֆերայի վերին շերտերում և ստրատոսֆերայում:

գ) Քլոր պարունակող նյութերը.

i) Ամբողջությամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ  $CCL_4$ ,  $CFCL_3$ , (CFC-11),  $CF_2CL_2$ , (CFC-12),  $C_2F_3CL_3$  (CFC-113),  $C_2F_4CL$  (CFC-114)

Ամբողջությամբ հալոհիդացված ալկանները մարդածին են և գործում են որպես  $CLO_x$ -ի աղբյուր, որը վճռական դեր է խաղում օզոնի լուսաքիմիայում, հիմնականում 30-50 կմ բարձրության վրա:

ii) Մասամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ  $CH_3CL$ ,  $CHF_2CL$  (CFC-22),  $CH_3CCL_3$ ,  $CHFCL_2$  (CFC-21)

$CH_3CL$ -ի աղբյուրները բնական են, այն դեպքում, երբ մնացած վերոհիշյալ մասամբ հալոհիդացված ալկաններն ունեն մարդածին ծագում: Այդ գազերը ևս հանդես են գալիս որպես ստրատոսֆերային  $CLO_x$ -ի աղբյուր:

դ) Բրոմ պարունակող նյութեր.

Ամբողջությամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ  $CF_3Br$

Այդ գազերը մարդածին են և գործում են որպես  $BrO_x$ -ի աղբյուր, որոնց ազդեցությունը նման է  $CLO_x$ -ի ազդեցությանը:

ե) Ջրածին պարունակող նյութերը.

i) Ջրածին ( $H_2$ )

Ջրածինը, որի աղբյուրը բնական է և մարդածին, աննշան դեր է խաղում ստրատոսֆերայի լուսաքիմիայում:

ii) Ջուր ( $H_2O$ )

Ջուրը, որի աղբյուրը բնական է, շատ կարևոր դեր է խաղում ինչպես տրոպոսֆերային, այնպես էլ ստրատոսֆերային լուսաքիմիայում: Ստրատոսֆերայում ջրային գոլորշիների լոկալ աղբյուր են մեթանի և, ավելի քիչ, ջրածնի օքսիդացումը:

## Հավելված 2

### Տեղեկության փոխանակում

1. Կոնվենցիայի Կողմերը ընդունում են, որ տեղեկության հավաքումը և դրա փոխանակումը սույն Կոնվենցիայի նպատակների իրականացման կարևոր միջոցներ են և այն բանի գրավականը, որ ցանկացած ձեռնարկված միջոցառումներ, կլինեն տեղին և արդարացի: Դրա համար Կողմերը կփոխանակեն գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, գործնական, առևտրային և իրավական տեղեկություն:

2. Կոնվենցիայի Կողմերը, այն հարցի լուծման համար, թե ինչ տեղեկություն է ենթակա հավաքման և փոխանակման, պարտավոր են ուշադրություն դարձնել տեղեկության օգտակարության և նրա ստացման արժեքավորության վրա: Կողմերն այնուհետև ընդունում են, որ համագործակցությունը, որի մասին խոսվում է սույն հավելվածում, պետք է համատեղելի լինի ազգային օրենքների, որոշումների և արտոնագրերի նկատմամբ կիրառվող պրակտիկայի հետ, առևտրական գաղտնիքների և գաղտնագրված և արտոնագրված տեղեկության հետ:

3. Գիտական տեղեկությանն է վերաբերում՝

ա) տեղեկությունը գիտական հետազոտությունների մասին, որոնք կատարվում են գիտատեխնիկական ծրագրերի համադրման հեշտացման նպատակով պլանավորված և պետական կամ մասնավոր հիմունքներով, և այդպիսով ավելի արդյունավետ օգտագործելով առկա ազգային և միջազգային ռեսուրսները,

բ) արտանետումների մասին տվյալները, որոնք անհրաժեշտ են հետազոտման համար,

գ) հատուկ գիտական գրականության մեջ հրապարակված գիտական արդյունքների մասին տեղեկությունը երկրի մթնոլորտի ֆիզիկայի և քիմիայի, փոփոխությունների նկատմամբ նրա զգայունության մասին և հատկապես, օզոնային շերտի վիճակի և մարդու առողջության, շրջակա միջավայրի և կլիմայի վրա թողած հետևանքների մասին, ժամանակի ցանկացած սանդղակում օզոնի ընդհանուր բաղադրության կամ ուղղաձիգ պրոֆիլի փոփոխության մասին,

դ) գիտական հետազոտությունների արդյունքների գնահատման և ապագա ուսումնասիրությունների հանձնարարականների մասին:

4. Տեխնիկական տեղեկությանն է վերաբերում տեղեկությունը՝

ա) օզոնային շերտը փոփոխող նյութերի արտանետումները կրճատող քիմիական փոխարինողների և այլընտրանքային տեխնոլոգիաների առկայության և արժեքի մասին, ինչպես նաև դրա հետ կապված պլանավորվող կամ իրականացվող հետազոտությունների մասին,

բ) քիմիական և այլ փոխարինողների և այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառման հետ կապված սահմանափակումների և հնարավոր ռիսկի մասին:

5. Սոցիալ-տնտեսական և առևտրական տեղեկության 1-ին հավելվածում հիշատակված նյութերի վերաբերյալ տեղեկությանն է վերաբերում տեղեկությունը՝

ա) արտադրության և արտադրական հզորության մասին,

բ) արտադրանքի օգտագործման և օգտագործման տենդենցների մասին,

գ) ներմուծման/արտահանման մասին,

դ) անուղղակիորեն օզոնային շերտի փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեության տեսակների ծախսերի, ռիսկի և օգուտների մասին և այդ գործունեությունը կարգավորող ընդունված կամ պլանավորվող միջոցառումների ազդեցության մասին:

6. Իրավական տեղեկությանն է վերաբերում հետևյալ տեղեկությունը՝

ա) օզոնային շերտի պահպանության վերաբերյալ ազգային օրենքների, վարչական միջոցառումների և իրավական ուսումնասիրությունների մասին,

բ) օզոնային շերտի պահպանության վերաբերյալ միջազգային, այդ թվում նաև երկկողմ համաձայնագրերի մասին,

գ) օզոնային շերտի պահպանության հետ կապված լիցենզավորման մեթոդների, պայմանների և արտոնագրերի առկայության մասին:

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 30-ից:

# 1987 Թ. ՄՈՆՐԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

<b>Համարը</b>	<b>Տեսակը</b>	<b>Հիմնական</b>
<b>Տիպը</b>	<b>Կարգավիճակը</b>	<b>Գործում է</b>
<b>Սկզբնաղբյուրը</b>	<b>Ընդունման վայրը</b>	<b>Մոնրեալ</b>
<b>Ընդունող մարմինը</b>	<b>Ընդունման ամսաթիվը</b>	<b>16.09.1987</b>
<b>Ստորագրող մարմինը</b>	<b>Ստորագրման ամսաթիվը</b>	<b>16.09.1987</b>
<b>Վավերացնող մարմինը</b>	<b>Վավերացման ամսաթիվը</b>	
<b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b>	<b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>	
Արձանագրություն		
ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12)		
Հայաստանի Հանրապետություն		
30.12.1999		

## ՄՈՆՐԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

### Մ Ո Ն Ր Ե Ա Լ Ի Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

#### ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Արձանագրության Կողմերը,

- հանդիսանալով Օզոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիայի Կողմեր,
- հիշելով մարդու գործունեության հետևանքով օզոնային շերտի փոփոխություններից առաջացած ժամանակավոր հետևանքներից մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը պահպանելու համար միջոցներ ձեռնարկելու Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորության մասին,
- ընդունելով, որ օզոն քայքայող որոշ նյութերի համաշխարհային մասշտաբով կատարված արտանետումները կարող են զգալի չափով հյուծել կամ այլ կերպ փոխել օզոնային շերտը, ինչը հղի է մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար անբարենպաստ հետևանքներով,
- հիշելով կլիմայի վրա այդ նյութերի արտանետումների թողած պոտենցիալ ազդեցության մասին,
- գիտակցելով, որ օզոնային շերտը քայքայումից պահպանելու համար ձեռնարկված միջոցառումների հիմքում պետք է ընկած լինեն գիտական մտքեր, որոնք կկիրառվեն տեխնիկական և տնտեսական դատողություններից ելնելով,
- լի վճռականությամբ՝ ապահովելու օզոնային շերտի պահպանությունը, օզոն քայքայող նյութերի գլոբալ արտանետումների համապատասխան կարգավորման միջոցով կանխիչ միջոցներ ձեռնարկելով, ի վերջո նպատակ ունենալով գիտական հիմունքներով և հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական բնույթի դիտարկումները, հասնել դրանց վերացմանը,
- ընդունելով, որ անհրաժեշտ է նախատեսել հատուկ դրույթ այդ նյութերի նկատմամբ զարգացող երկրների պահանջարկը բավարարելու համար,
- հաշվի առնելով որոշ քլորաֆտորածխածնային արտանետումների կարգավորման համար ձեռնարկված կանխիչ միջոցները, որոնք արդեն ընդունված են կամ ընդունվում են ազգային և տարածաշրջանային մակարդակներով,
- հաշվի առնելով օզոնային շերտը քայքայող նյութերի արտանետումների կարգավորման և կրճատման նպատակով հետազոտությունների և մշակումների բնագավառում միջազգային գիտատեխնիկական համագործակցությանը աջակցելու կարևորությունը, հաշվի առնելով, մասնավորապես, զարգացող պետությունների կարիքները,
- պայմանավորվեցին հետևյալի մասին.



## Սահմանումներ

Սույն Արձանագրության նպատակների համար՝

1. «Կոնվենցիա» նշանակում է 1985 թվականի մարտի 22-ին ընդունված Օզոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիան:
2. «Կողմերը», եթե ենթատեքստն այլ բան չի ենթադրում, նշանակում են սույն Արձանագրության Կողմերը:
3. «Քարտուղարություն» նշանակում է Կոնվենցիայի քարտուղարություն:
4. «Կարգավորվող նյութ» նշանակում է ցանկացած նյութ, որը նշված է սույն Արձանագրության Ա Հավելվածում, որը գոյություն ունի ինքնուրույն կամ խառնուրդի մեջ: Դա չի վերաբերում սակայն այն նյութերին կամ խառնուրդներին, որոնք կազմում են պատրաստի արտադրանքի բաղադրիչ մասը, որոնք ունեն այլ ձև, քան այն տարողությունը, որն օգտագործվում է նշված նյութի տեղափոխման կամ պահպանման համար:
5. «Արտադրություն» նշանակում է կարգավորվող նյութերի արտադրված քանակը, հանած նյութի այն քանակը, որը ոչնչացվում է Կողմերի կողմից հաստատման ենթակա տեխնոլոգիաների կիրառմամբ:
6. «Սպառում» նշանակում է կարգավորվող նյութերի արտադրությունը, գումարած ներմուծումը, հանած արտահանումը:
7. Արտադրության, ներմուծման, արտահանման և սպառման «հաշվարկային մակարդակները», 3-րդ հոդվածին համապատասխան, սահմանված մակարդակներն են:
8. «Արտադրության ռացիոնալիզացիա» նշանակում է արտադրության հաշվարկային ամբողջ մակարդակի կամ նրա մի մասի փոխանցումը մի Կողմից մյուս Կողմին, տնտեսական արդյունավետություն ապահովելու կամ ձեռնարկության փակման հետևանքով սպասվող ոչ բավարար պահանջարկը ծածկելու համար:

## Հողված 2

### Կարգավորման միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի տասներկու ամսվա ընթացքում, որն սկսվում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու 7-րդ ամսվա առաջին օրվանից և հաջորդող յուրաքանչյուր տասներկու ամսվա ժամանակաշրջանում Ա Հավելվածի I խմբի կարգավորվող նյութերի սպառման հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի նրա սպառման հաշվարկային մակարդակը: Այդ նույն ժամանակաշրջանի վերջում այդ նյութերից մեկը կամ մի քանիսը արտադրող յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի իր կողմից արտադրվող այդ նյութերի հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր արտադրանքի հաշվարկային մակարդակը, բացառությամբ նրան, որ այդ մակարդակը կարող է աճել, բայց 1986 թվականի մակարդակի համեմատությամբ ոչ ավելի, քան 10%-ով: Այդպիսի աճ թույլատրվում է միայն այն դեպքում, եթե այն անհրաժեշտ է Կողմերի, 5-րդ հոդվածի շրջանակներում գործող, ներքին հիմնական կարիքները բավարարելու համար և Կողմերի միջև արդյունաբերական արտադրանքի բաշխման ռացիոնալիզացիայի նպատակով:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի, սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո 37-րդ ամսվա առաջին օրվանից սկսած տասներկու ամսվա ընթացքում և հաջորդող յուրաքանչյուր տասներկու ամսվա ժամանակաշրջանի համար Ա Հավելվածի II խմբի մեջ ընդգրկված կարգավորվող նյութերի սպառման հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր սպառման հաշվարկային մակարդակը: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այդ նյութերից մեկը կամ մի քանիսը, ապահովում է, որպեսզի իր կողմից արտադրվող այդ նյութերի հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր արտադրանքի հաշվարկային մակարդակը, բացառությամբ նրան, որ այդ մակարդակը կարող է աճել, բայց 1986 թվականի մակարդակի համեմատությամբ ոչ ավելի, քան 10%-ով: Այդպիսի աճը թույլատրվում է միայն այն ժամանակ, եթե այն անհրաժեշտ է Կողմերի 5-րդ

հողվածի շրջանակներում գործող, ներքին հիմնական կարիքները բավարարելու համար, և Կողմերի միջև արդյունաբերական արտադրանքի բաշխման ռացիոնալիզացիայի նպատակով: Այդ միջոցառումների կիրառման մեխանիզմը կորոշվի Կողմերի կողմից առաջին խորհրդակցության ժամանակ առաջին գիտական ամփոփումն անցկացնելուց հետո:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի 1993 թվականի հուլիսի 1-ից մինչև 1994 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակամիջոցում և հաջորդող յուրաքանչյուր տասներկու ամսվա ժամանակաշրջանում Ա Հավելվածի I խմբին պատկանող կարգավորվող նյութերի տարեկան սպառման մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր կողմից սպառված հաշվարկային մակարդակի 80%-ը: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այդ նյութերից մեկը կամ մի քանիսը, այդ նույն ժամանակահատվածներում ապահովում է, որ իր կողմից արտադրվող այդ նյութերի տարեկան հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր արտադրանքի հաշվարկային մակարդակի 80%-ը: Սակայն Կողմերի, 5-րդ հողվածի դրույթների շրջանակներում գործող, ներքին հիմնական պահանջները բավարարելու և Կողմերի միջև արդյունաբերական արտադրանքի բաշխման ռացիոնալիզացիայի համար իր արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը, բայց 1986 թվականի իր արտադրանքի հաշվարկային մակարդակի 10%-ից ոչ ավելի:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի 1998 թվականի հուլիսի 1-ից մինչև 1999 թվականի հունիսի 30-ը և հաջորդող յուրաքանչյուր տասներկու ամսվա ժամանակաշրջանում Ա Հավելվածի I խմբի կարգավորվող նյութերի իր սպառման հաշվարկային մակարդակը չգերազանցի տարեկան 1986 թվականի իր սպառման հաշվարկային մակարդակի 50%-ը: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այդ նյութերից մեկը կամ մի քանիսը, այդ նույն ժամանակաշրջանում ապահովում է, որպեսզի կարգավորվող նյութերի իր արտադրանքի հաշվարկային մակարդակը չգերազանցի 1986 թվականի իր արտադրման հաշվարկային մակարդակի 50%-ը: Սակայն Կողմերի, 5-րդ հողվածի դրույթների շրջանակներում, գործող հիմնական ներքին կարիքները բավարարելու համար և Կողմերի միջև արդյունաբերական արտադրանքի բաշխման ռացիոնալիզացիայի նպատակով, նրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը, բայց ոչ ավելի, քան 1986 թվականի իր արտադրության հաշվարկային մակարդակի 15%-ով: Սույն կետը կիրառվում է այն դեպքում, եթե Կողմերը չընդունեն այլ լուծում խորհրդակցություններից որևէ մեկում ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի երկու երրորդի մեծամասնությամբ, որոնք ներկայացնում են նյութեր սպառող Կողմերի ընդհանուր հաշվարկային մակարդակի ոչ պակաս, քան երկու երրորդը: Այդ լուծումը քննարկվում և ընդունվում է 6-րդ հողվածում նշված գնահատականների լույսի ներքո:

5. Ցանկացած Կողմ, որի Ա Հավելվածի I խմբի կարգավորվող նյութերի արտադրանքի հաշվարկային մակարդակը 1986 թվականին կազմել է տարեկան 25 կիլոտոննայից պակաս, կարող է փոխանցել յուրաքանչյուր Կողմին կամ ընդունել նրանից ռացիոնալիզացիայի նպատակով 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում նշված սահմանները գերազանցող արդյունաբերության, այն պայմանով, եթե այդ Կողմերի ընդհանուր գումարային հաշվարկային մակարդակը դուրս չգա արտադրության սահմանափակումների սահմաններից, որոնք սահմանված են այս հողվածով: Այդպիսի արտադրության փոխանցման մասին ծանուցումն ուղարկվում է քարտուղարություն, փոխանցման ժամկետից ոչ ուշ:

6. Ցանկացած Կողմ, որը չի գործում 5-րդ հողվածի շրջանակներում, և ունի կարգավորվող նյութերի արտադրության հզորություններ, որոնք գտնվում են շինարարության փուլում կամ որոնց համար ընդունվել են պայմանագրային պարտավորություններ մինչև 1987 թվականի սեպտեմբերի 16-ը, և որոնք նախատեսվել են ազգային օրենսդրությամբ, մինչև 1987 թվականի հունվարի 1-ը, այդպիսի հզորությունների արտադրանքը կարող է ավելացնել իր կողմից 1986 թվականի այդ նյութերի արտադրանքի բազային մակարդակին 1986 թվականի իր արտադրանքի հաշվարկային մակարդակը որոշելու նպատակով, պայմանով, որ այդ հզորությունների շինարարությունը կավարտվի մինչև 1990 թվականի դեկտեմբերի 31-ը, և այդպիսի արտադրությունը այդ Կողմի բնակչության մեկ շնչի կողմից կարգավորվող նյութերի ամենամյա սպառումը 0,5 կիլոգրամից չի ավելացնի:

7. 5-րդ կետի համաձայն, արտադրանքի ցանկացած փոխանցման մասին, կամ 6-րդ կետի համաձայն արտադրանքի ցանկացած ավելացման մասին ծանուցումն ուղարկվում է քարտուղարությանը այդպիսի փոխանցման պահից ոչ ուշ:

8. ա) Ցանկացած Կողմ, որը հանդիսանում է տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների անդամ երկիր, համաձայն Կոնվենցիայի 1-ին հողվածի 6-րդ կետի

սահմանումների, կարող է որոշում կայացնել, որ նրանք համատեղ են սպառում այդ հողվածի շրջանակներում ստանձնած իրենց պարտավորությունները այն պայմանով, որ նրանց սպառման ընդհանուր գումարային հաշվարկային մակարդակը չի գերազանցում սույն հողվածում սահմանված մակարդակներին:

բ) Կողմը հայտնում է քարտուղարությանը ցանկացած այդպիսի համաձայնության պայմանների մասին, մինչև սպառման կրճատման ամսաթիվը, որը համաձայնության առարկան է,

գ) այդպիսի համաձայնությունը ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ տնտեսական ինտեգրացիայի այդ տարածաշրջանային կազմակերպության բոլոր անդամ երկրները և ինքը տարածաշրջանային կազմակերպությունը հանդիսանում են Արձանագրության Կողմեր և տեղեկացրել են քարտուղարությանը այն մասին, թե ինչպես են նրանք ապահովում այդ կատարումը:

9. ա) 6-րդ հողվածի համաձայն, կատարած գնահատականների հիման վրա, Կողմերը կարող են վճիռ ընդունել, թե պետք է արդյոք՝

(i) ճշտել Ա Հավելվածում նշված օգոն քայքայող ունակության հաշվարկային գործակիցները և եթե այո, ապա ինչքանով, և

(ii) հարկավոր է արդյոք անցկացնել կարգավորվող նյութերի արտադրանքի կամ սպառման հետագա ճշտում և կրճատում 1986 թվականի մակարդակի հետ համեմատած, և եթե այո, ապա ինչպիսի մասշտաբներով, ծավալներով և ինչ ժամկետներում,

բ) այդպիսի ճշտումների մասին առաջարկությունները քարտուղարության կողմից հայտնվում են Կողմերին, նրանց խորհրդակցության սկսվելուց առնվազն վեց ամիս առաջ, որտեղ նրանք ներկայացվում են հաստատման,

գ) ընդունելով այդպիսի որոշումներ, Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի հասնեն պայմանավորվածության միաձայնության ճանապարհով: Եթե, չնայած միաձայնության հասնելու բոլոր ջանքերին, այնուամենայնիվ, համաձայնության չեն հասնում, ապա այդպիսի որոշումները, որպես ծայրահեղ միջոց, ընդունվում են ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի երկու երրորդի ձայների մեծամասնությամբ, որոնք ներկայացնում են Կողմերի կողմից կարգավորվող նյութերի ընդհանուր սպառման 50%-ից ոչ պակաս,

դ) որոշումները, որոնք պարտադիր են բոլոր Կողմերի համար, անհապաղ ավանդապահի կողմից հայտնվում են Կողմերին: Եթե որոշումների մեջ չի վերապահվել այլ բան, որոշումներն ուժի մեջ են մտնում, ավանդապահի կողմից ծանուցումների տարածման ամսաթվից սկսած վեց ամիսը լրանալուց հետո:

10. ա) 6-րդ հողվածին համապատասխան, կատարված գնահատականների հիման վրա, որոնք անց են կացվել և Կոնվենցիայի 9-րդ հողվածում շարադրված գործընթացի համաձայն, Կողմերը կարող են ընդունել որոշում.

(i) անհրաժեշտ է արդյոք սույն Արձանագրության ցանկացած հավելվածների մեջ մտցնել կամ հանել ցանկացած նյութերը և եթե այո, ապա որ նյութերը, և

(ii) նշված նյութերի նկատմամբ կիրառվող կարգավորման միջոցառումների մեխանիզմների, մասշտաբների և ժամկետների մասին,

բ) ցանկացած այդպիսի որոշում ուժի մեջ է մտնում այն դեպքում, եթե նա ընդունվել է ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

11. Չնայած այս հողվածում պարունակվող դրույթներին, Կողմերը կարող են ընդունել ավելի խիստ միջոցներ, քան պահանջվում է սույն հողվածով:

### Հոդված 3

#### Կարգավորվող մակարդակների հաշվարկը

2-րդ և 5-րդ հողվածների նպատակների համար յուրաքանչյուր Կողմ Ա Հավելվածի յուրաքանչյուր խմբի նյութերի համար առաջարկում է իր հաշվարկային մակարդակները՝

ա) արտադրության համար, հետևյալ ճանապարհով՝

(i) յուրաքանչյուր կարգավորվող նյութի համար իր տարեկան արտադրանքը բազմապատկում է իր համար Ա Հավելվածի մեջ նշված օգոն քայքայող ունակության ցուցանիշով, և

(ii) գումարելով յուրաքանչյուր խմբի համար ստացված ցուցանիշները,

բ) կիրառելով «ա» ենթակետով սահմանված *mutatis mutandis*, գործընթացը, ներմուծմանը և արտահանմանը համապատասխան,

գ) սպառման միջոցով իրենց արտադրանքի հաշվարկային մակարդակներին գումարելով ներմուծումը և այդ գումարից հանելով արտահանման իր հաշվարկային մակարդակը, որոնք սահմանվել են «ա» և «բ» ենթակետերին համապատասխան: Սակայն, 1993 թվականի հունվարի 1-ից սկսած, եթե կարգավորվող նյութերը արտահանվում են Կողմ չհանդիսացող երկիր, ապա արտահանող Կողմի սպառման մակարդակի չափը հաշվարկելիս կարգավորվող նյութերի արտահանումը չի հանվում:

## Հոդված 4

### Առևտրի կանոնավորումը Կողմ չհանդիսացող երկրների հետ

1. Սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր Կողմ արգելում է սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից կարգավորվող նյութերի ներմուծումը:

2. Սկսած 1993 թվականի հունվարի 1-ից 5-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում գործող Կողմերից ոչ մեկը ոչ մի կարգավորվող նյութ չի կարող արտահանել սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած երկիր:

3. Սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո երեք տարվա ընթացքում Կողմերը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածում նախատեսված դրույթներին համապատասխան, հավելվածի ձևով կպատրաստեն կարգավորվող նյութեր պարունակող ապրանքների ցուցակը: Այն Կողմերը, որոնք չեն առարկել հավելվածի դեմ, նշված գործընթացին համապատասխան, հավելվածը ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում արգելում են սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից այդ ապրանքների ներմուծումը:

4. Սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելու պահից հետո, հինգ տարվա ընթացքում, Կողմերը կորոշեն կարգավորվող նյութի հիման վրա արտադրվող, բայց դրանք չպարունակող, արտադրանքի արգելման կամ ներմուծման սահմանափակման գործնական հնարավորությունները սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող երկրներից: Կողմերը, եթե նրանք կհամարեն այդ հնարավոր, համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածում նշված գործընթացին, նախապատրաստում են այդ նյութերի ցուցակը հավելվածի տեսքով: Դրա դեմ չառարկած Կողմերը նշված գործընթացին համապատասխան, հավելվածը ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում արգելում կամ սահմանափակում են այդպիսի արտադրանքի ներմուծումը սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից:

5. Յուրաքանչյուր Կողմ չի խրախուսում կարգավորվող նյութերի արտադրության և կիրառման համար տեխնոլոգիայի արտահանումը սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն:

6. Յուրաքանչյուր Կողմ ձեռնպահ է մնում սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող երկրներին կարգավորվող նյութերի արտադրությանը նպաստող արտադրանքի, սարքերի, սարքավորումների կամ տեխնոլոգիաների արտահանման համար նոր դրամական օժանդակություն, օգնություն, վարկեր, երաշխավորություն կամ ապահովագրության ծրագրեր տրամադրելուց:

7. 5-րդ և 6-րդ կետերը չեն կիրառվում այն արտադրանքի, սարքերի, սարքավորումների կամ տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք նպաստում են կարգավորվող նյութերի անվնաս պահպանությանը, օգտագործմանը, վերաշրջանառությանը կամ ոչնչացմանը, արագացնում են այլընտրանքային նյութերի որոնումը, կամ այլ ձևով նպաստում են կարգավորվող նյութերի արտանետումների կրճատմանը:

8. Չնայած սույն հոդվածի դրույթներին, 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում նշված ներմուծումը կարող է թույլատրվել սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից, եթե այդ պետությունը, ինչպես սահմանված է Կողմերի խորհրդակցություններից մեկում, լրիվ ծավալով պահպանում է 2-րդ հոդվածը, սույն հոդվածը և այդ նպատակով ներկայացնում է 7-րդ հոդվածում նախատեսված տվյալները:

**Չարգացող երկրների հատուկ վիճակը**

1. Իր ներքին հիմնական պահանջները բավարարելու համար ցանկացած Կողմ, որը զարգացող երկիր է, և որի կարգավորվող նյութերի ամենամյա սպառման հաշվարկային մակարդակը բնակչության մեկ շնչին ընկնող բաժնի հաշվով 0,3 կիլոգրամից պակաս է, Արձանագրությունն իր համար ուժի մեջ մտնելու պահից, կամ դրանից հետո ցանկացած այլ պահից, Արձանագրության ուժի մեջ մտնելու պահից հաշված տասը տարվա ընթացքում իրավունք ունի 2-րդ հոդվածի 1-ից 4-րդ կետերում նշված ժամկետից իր կողմից կարգավորման միջոցների պահպանումը հետաձգել տասը տարով: Սակայն, այդպիսի Կողմը չպետք է գերազանցի բնակչության մեկ շնչին ընկնող 0,3 կիլոգրամ ամենամյա սպառման հաշվարկային մակարդակը: Ցանկացած այդպիսի Կողմին իրավունք է վերապահվում 1995-1997 թվականները ներառյալ ընկած ժամանակաշրջանում իր կողմից կարգավորման միջոցները պահպանելու համար որպես հիմք օգտագործել կամ իր սպառման հաշվարկային միջին տարեկան մակարդակը, կամ բնակչության մեկ շնչին ընկած 0,3 կիլոգրամ սպառման հաշվարկային մակարդակը, կախված նրանից, թե որն է ցածր:

2. Կողմերը պարտավորվում են աջակցել զարգացող երկիր հանդիսացող Կողմերին մուտք ունենալ դեպի էկոլոգիապես անվտանգ այլընտրանքային քիմիական նյութերը և տեխնոլոգիաները և նրանց օգնություն ցույց տալ այդպիսի այլընտրանքային նյութերի և տեխնոլոգիաների օգտագործմանը արագորեն անցնելու նպատակով:

3. Կողմերը պարտավորվում են երկկողմ կամ բազմակողմ ուղիներով հեշտացնել զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին դրամական օժանդակությունների, օգնության, վարկերի, երաշխիքների կամ ապահովագրման ծրագրերի տրամադրելը այլընտրանքային տեխնոլոգիայի և փոխարինող ապրանքների օգտագործման նպատակով:

**Կարգավորման միջոցառումների գնահատում և ամփոփում**

Սկսած 1990 թվականից և այնուհետև ոչ հաճախ, քան չորս տարին մեկ, գոյություն ունեցող գիտական, էկոլոգիական, տեխնիկական և տնտեսական տեղեկատվության հիման վրա Կողմերն անց են կացնում կարգավորման միջոցառումների գնահատում, որը նախատեսվում է 2-րդ հոդվածով: Յուրաքանչյուր անցկացվող գնահատումից ոչ պակաս, քան մեկ տարի առաջ Կողմերը հրավիրում են թվարկված բնագավառների համապատասխան որակյալ փորձագետների խմբերին և որոշում յուրաքանչյուր այդպիսի խմբի կազմը և ղեկավարման շրջանակը: Իրենց հրավիրման պահից հետո, մեկ տարվա ընթացքում, խմբերը քարտուղարության միջոցով իրենց եզրակացությունները հասցնում են Կողմերին ի գիտություն:

**Տվյալների ներկայացում**

1. Յուրաքանչյուր Կողմ, Կողմ դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում քարտուղարությանը ներկայացնում է վիճակագրական տվյալներ 1986 թվականի ընթացքում յուրաքանչյուր կարգավորվող նյութի վերաբերյալ իր արտադրության, ներմուծման, արտահանման մասին կամ այդ բնույթի ամենահավաստի գնահատման տվյալները, եթե փաստացի տվյալները բացակայում են:

2. Յուրաքանչյուր Կողմ քարտուղարությանը ներկայացնում է վիճակագրական տվյալներ՝ իր Կողմ դարձած տարում, այդ նյութերի արտադրության մասին (հատուկ նշելով ամենամյա ոչնչացվող նյութերի

քանակների տվյալները, որտեղ կիրառվել է Կողմերի հաստատմանը ենթակա տեխնոլոգիան), համապատասխանորեն Կողմեր հանդիսացող և չհանդիսացող երկրներ կատարած ներմուծման և արտահանման մասին: Ամեն հետագա տարվա համար նա ներկայացնում է այդ տվյալները ոչ ուշ, քան տվյալներին վերաբերող տարին վերջանալուց ինը ամիս անց:

## Հոդված 8

### Չպահպանում

Իրենց առաջին հերթական խորհրդակցության ժամանակ Կողմերը քննարկում և հաստատում են սույն Արձանագրության դրույթների խախտման փաստը որոշող գործընթացներն ու կազմակերպչական մեխանիզմը և այն, թե ինչպես վարվել Արձանագրությունը խախտող Կողմերի հետ:

## Հոդված 9

### Հետազոտություններ, մշակումներ, հասարակության տեղեկացում և տեղեկության փոխանակում

1. Կողմերը համագործակցում են իրենց ազգային օրենսդրությանը, կանոններին և պրակտիկային համապատասխան և հաշվի առնելով, մասնավորապես, զարգացող երկրների կարիքները, նպատակ ունենալով ուղղակի կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով աջակցել հետազոտությունների, մշակումների զարգացմանը և տեղեկության փոխանակմանը, հետևյալի մասին՝

ա) կարգավորվող նյութերի անվտանգ պահպանության բարելավման, օգտագործման, վերաշրջանառության կամ ոչնչացման, կամ դրանց արտանետումների այլ ձևով կրճատման առավել կատարելագործված տեխնոլոգիայի մասին,

բ) կարգավորվող նյութերի հնարավոր փոխարինողների, դրանք պարունակող արտադրանքի և նրանց հիման վրա արտադրված արտադրանքի մասին,

գ) կարգավորման համապատասխան ռազմավարության կիրառման հետ կապված ծախսերի և օգուտների մասին:

2. Կողմերը անհատապես, միասին կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով համագործակցում են, հասարակության կողմից կարգավորվող նյութերի և օզոնային շերտը քայքայող այլ նյութերի արտանետումների էկոլոգիական հետևանքները ավելի խորը հասկանալի ապահովելու գործում:

3. Սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում և ապա, երկու տարին մեկ, յուրաքանչյուր Կողմ քարտուղարությանը ներկայացնում է հակիրճ հաշվետվություն սույն հոդվածին համապատասխան ձեռնարկված միջոցառումների մասին:

## Հոդված 10

### Տեխնիկական օգնություն

1. Հատուկ հաշվի առնելով զարգացող երկրների կարիքները և հիշելով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի դրույթները, Կողմերը համագործակցում են տեխնիկական օգնության ընդլայնման բնագավառում սույն Արձանագրությունում մասնակցության հեշտացման և նրա կատարման համար:

2. Ցանկացած Կողմ կամ սույն Արձանագրությունը ստորագրած Կողմ կարող է քարտուղարությանը տեխնիկական օգնության հարցում ուղարկել դրա կատարման կամ դրանում մասնակցելու համար:

3. Իրենց առաջին խորհրդակցությունում Կողմերը սկսում են բանակցությունները 9-րդ հոդվածով և սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պարտավորությունների կատարման, այդ թվում նաև՝ աշխատանքային պլանների նախապատրաստման վերաբերյալ: Այդպիսի աշխատանքային պլաններում

հատուկ ուշադրություն պետք է դարձնել զարգացող երկրների կարիքներին և հանգամանքներին: Անհրաժեշտ է այդպիսի աշխատանքային պլաններում նախատեսված միջոցառումներում խրախուսել Արձանագրության Կողմ չհանդիսացող երկրների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների մասնակցությունը:

## Հոդված 11

### Կողմերի խորհրդակցություններ

1. Կողմերն անց են կացնում խորհրդակցություններ կանոնավոր ժամանակահատվածներից հետո: Կողմերի առաջին խորհրդակցությունը քարտուղարությունը գումարում է սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան մեկ տարի հետո, ինչպես նաև Կոնվենցիայի Կողմերի խորհրդակցության հետ միասին, եթե վերջինս նախատեսված է այդ ընթացքում:

2. Եթե Կողմերը չընդունեն այլ որոշում, Կողմերի հաջորդ հերթական խորհրդակցությունները անց են կացվում Կոնվենցիայի Կողմերի խորհրդակցությունների հետ համատեղ: Կողմերի արտահերթ խորհրդակցությունները կարող են անցկացվել ցանկացած այլ ժամկետներում, Կողմերի ցանկացած խորհրդակցության որոշման համաձայն կամ ցանկացած Կողմի գրավոր խնդրանքով, այն պայմանով, որ քարտուղարության կողմից այդպիսի խնդրանքը Կողմերին ուղարկելու ամսաթվից հետո, վեց ամսվա ընթացքում, նա ստանա Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդի պաշտպանությունը:

3. Իրենց առաջին խորհրդակցությանը Կողմերը՝

- ա) միաձայն հաստատում են իրենց խորհրդակցությունների ընթացակարգային կանոնները,
- բ) միաձայն հաստատում են 13-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ֆինանսական կանոնները,
- գ) 6-րդ հոդվածի համաձայն, ստեղծում են խմբեր և որոշում նրանց ղեկավարման շրջանակները,
- դ) քննարկում և հաստատում են 8-րդ հոդվածում հիշատակված գործընթացները և կազմակերպչական մեխանիզմը,
- ե) 10-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սկսում են աշխատանքային պլանների նախապատրաստումը:

4. Կողմերի խորհրդակցությունների գործառույթները կայանում են հետևյալում՝

- ա) սույն Արձանագրության կատարման և նախատեսված կրճատումների ամփոփում,
- բ) 2-րդ հոդվածի 9-րդ կետում նշված ցանկացած ճշտումների և կրճատումների վերաբերյալ որոշման ընդունում,
- գ) որոշումների ընդունում հավելվածներում ընդգրկված նյութերի թվի լրացման, ընդլայնման կամ կրճատման մասին, ինչպես նաև 2-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան, կարգավորման համապատասխան միջոցառումների ձեռնարկման վերաբերյալ,
- դ) անհրաժեշտության դեպքում, ղեկավար ցուցումների կամ 7-րդ հոդվածով և 9-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված տեղեկության ներկայացման գործընթացների ընդունում,
- ե) 10-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ ներկայացված տեխնիկական օգնության մասին հարցումների քննարկում,
- զ) 12-րդ հոդվածի «գ» ենթակետին համապատասխան՝ քարտուղարության կողմից պատրաստված զեկուցումների քննարկում,
- է) 2-րդ հոդվածով նախատեսված կարգավորման միջոցառումների գնահատման անցկացում՝ 6-րդ հոդվածին համապատասխան,
- ը) սույն Արձանագրության մեջ ուղղումներ մտցնելու մասին առաջարկությունների, ցանկացած գոյություն ունեցող կամ նոր հավելվածի՝ սահմանված կարգով քննարկում և ընդունում,
- թ) սույն Արձանագրության իրականացման համար բյուջեի քննարկում և հաստատում,
- ժ) սույն Արձանագրության նպատակների իրականացման համար պահանջվող ցանկացած լրացուցիչ միջոցառումների քննարկում և ընդունում:

5. Միավորված ազգերի կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև սույն Արձանագրության Կողմեր չհանդիսացող ցանկացած պետություն կարող է Կողմերի խորհրդակցությունում ներկայացվել որպես

դիտորդ: Ցանկացած մարմիններ կամ հաստատություններ՝ ազգային և միջազգային, կառավարական և ոչ կառավարական, որոնք իրավասու են օգոնային շերտի պահպանության բնագավառներում և որոնք տեղեկացրել են քարտուղարությանը, խորհրդակցությանը, որպես դիտորդ, մասնակցելու իրենց ցանկության մասին, կարող են ստանալ խորհրդակցությանը մասնակցելու թույլտվություն, եթե միայն դրա դեմ չի առարկում Կողմերի ներկաների առնվազն մեկ երրորդը: Դիտորդների թույլտվությունը և մասնակցությունը կարգավորվում է Կողմերի սահմանած ընթացակարգային կանոններով:

## Հոդված 12

### Քարտուղարություն

Սույն արձանագրության նպատակների համար քարտուղարությունը՝

ա) կազմակերպում և սպասարկում է 11-րդ հոդվածով նախատեսված Կողմերի խորհրդակցությունները,

բ) Կողմերի խնդրանքով ստանում և տարածում է 7-րդ հոդվածին համապատասխան ներկայացված տվյալները,

գ) կանոնավոր կերպով պատրաստում և Կողմերին է ուղարկում զեկուցումները, որոնք հիմնված են 7-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան ստացված տեղեկատվության վրա,

դ) տեղեկացնում է Կողմերին, 10-րդ հոդվածին համապատասխան, ստացված տեխնիկական օգնության վերաբերյալ ցանկացած հարցման մասին, այդպիսի օգնությանը աջակցելու նպատակով,

ե) խրախուսում է Կողմերի խորհրդակցություններում Կողմ չհանդիսացող երկրների և կազմակերպությունների՝ որպես դիտորդ մասնակցությունը և Արձանագրության դրույթներին համապատասխան նրանց գործողությունները:

զ) պատշաճ կարգով Կողմ չհանդիսացող պետությունների և կազմակերպությունների դիտորդներին է ուղղում «գ» և «դ» ենթակետերում հիշատակվող տեղեկությունը և հարցերը,

է) կատարում է ցանկացած այլ գործառույթներ Արձանագրության նպատակներին հասնելու համար, որոնք կարող են հանձնարարել նրան Կողմերը:

## Հոդված 13

### Ֆինանսական դրույթներ

1. Սույն Արձանագրության իրականացման համար անհրաժեշտ միջոցները, ներառյալ նաև նրանք, որոնք անհրաժեշտ են քարտուղարության գործունեության համար, կապված սույն Արձանագրության հետ, ձևավորվում են բացառապես Կողմերի անդամավճարների հաշվին:

2. Կողմերն իրենց առաջին խորհրդակցության ժամանակ միաձայնությամբ հաստատում են սույն Արձանագրության կատարման համար ֆինանսական կանոնները:

## Հոդված 14

### Սույն Արձանագրության կապը Կոնվենցիայի հետ

Սույն Արձանագրությունում այլ դրույթների բացակայության դեպքում, սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի արձանագրություններին վերաբերող դրույթները:



**Ստորագրում**

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների համար Մոնրեալում՝ 1987 թվականի սեպտեմբերի 16-ին, Օտտավայում՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 1988 թվականի հունվարի 16-ը և Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում, Նյու Յորքում՝ 1988 թվականի հունվարի 17-ից մինչև 1988 թվականի սեպտեմբերի 15-ը:

**Ուժի մեջ մտնելը**

1. Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում 1989 թվականի հունվարի 1-ից՝ պայմանով, որ ի պահ հանձնվի 1986 թվականի ընթացքում կարգավորվող նյութերի համաշխարհային սպառման գնահատման ոչ պակաս, քան երկու երրորդն ունեցող պետությունների կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ Արձանագրությանը միանալու մասին առնվազն տասնմեկ փաստաթուղթ և կատարվեն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ի կետի դրույթները: Եթե այդ ժամկետին նշված պայմանները չեն պահպանվել, սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում այդ պայմանների պահպանման ժամկետից հետո իննսուներորդ օրը:

2. Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային որևէ կազմակերպության կողմից 1-ին կետի համար ի պահ տրված ցանկացած փաստաթուղթ չի համարվում լրացում այն փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնել այդ կազմակերպության անդամ պետությունները:

3. Սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած պետություն կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն դառնում է սույն Արձանագրության Կողմ վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթղթերի ի պահ հանձնելու իննսուներորդ օրը:

**Կողմեր, որոնք միացել են Արձանագրությանը նրա ուժի մեջ մտնելուց հետո**

Հաշվի առնելով 5-րդ հոդվածի դրույթները, ցանկացած պետություն կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն, որը սույն Արձանագրության Կողմ է դառնում վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո, անհապաղ պահպանում է 2-րդ հոդվածով, ինչպես նաև 4-րդ հոդվածով սահմանված և այդ պահին գործող պարտավորությունների այն ամբողջ համալիրը, որը ներկայացվում է Արձանագրության ուժի մեջ մտնելու ժամանակ Կողմ դարձած պետություններին և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություններին:

**Վերապահումներ**

Սույն Արձանագրության մեջ վերապահումներ կատարել չի թույլատրվում:

**Դուրս գալը**

Սույն Արձանագրության նպատակների համար, Կոնվենցիայի 19-րդ հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են Կոնվենցիայից դուրս գալուն, կիրառվում են Արձանագրության Կողմերի նկատմամբ, բացառությամբ այն Կողմերի, որոնք նշված են 5-րդ հոդվածի 1-ին կետում: Յուրաքանչյուր այդպիսի Կողմ կարող է 2-րդ հոդվածի 1-ից 4-րդ կետերում նշված պարտավորությունները ընդունելուց չորս տարի անց ցանկացած ժամանակ դուրս գալ սույն Արձանագրությունից՝ գրավոր ծանուցելով ավանդապահին: Արձանագրությունից ցանկացած այդպիսի դուրս գալը ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարի անց կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշված լինել դուրս գալու մասին ծանուցման մեջ:

**Նույնական տեքստեր**

Սույն Արձանագրության բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հանդիսանում են հավասարազոր, հանձնվում է ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի վկայություն որի՝ պատշաճ ձևով դրա համար լիազորված ներքոստորագրյալները, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Մոնրեալ քաղաքում, 1987 թվականի սեպտեմբերի 16-ին:

**Ա ՀԱՎԵԼՎԱԾ**

**ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ**

Խումբ	Քիմիական նյութը	Օզոն քայքայող պոտենցիալը
Խումբ I		
CFCL <sub>3</sub>	(ՔՖԱ-11)	1.0
CF <sub>2</sub> CL <sub>2</sub>	(ՔՖԱ -12)	1.0
C <sub>2</sub> F <sub>3</sub> CL <sub>3</sub>	(ՔՖԱ-113)	0.8
C <sub>2</sub> F <sub>4</sub> CL <sub>2</sub>	(ՔՖԱ-114)	1.0
C <sub>2</sub> F <sub>5</sub> CL	(ՔՖԱ-115)	0.6
Խումբ II		
CF <sub>2</sub> BrCL	(հալոն-1211)	3.0
CF <sub>3</sub> Br	(հալոն-1301)	10.0
C <sub>2</sub> F <sub>4</sub> Br <sub>2</sub>	(հալոն-2402)	որոշվում է

\* Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 30-ից: